



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» *տպեցիկ* 2016թ.

N 309/ԱՐ

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 8-Ի N 297-Մ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 2016 թվականի նոյեմբերի 8-ի <<2016-2017 ուսումնական տարվա գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը>> հաստատելու մասին N 297/Մ հրամանի հավելվածի՝

- 1) վերնագրում <<ստուգման>> բառից հետո լրացնել <<ավարտական և>> բառերը,
- 2) 1-ին կետից հանել «պետական» բառը,
- 3) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

<<2. Հաստատությունների 12-րդ դասարաններում անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ դեկտեմբերի 24-30-ը և /կամ հունիսի 1-24-ը: 12-րդ դասարանի սովորողը դեկտեմբեր ամսին հանձնում է միայն այն առարկա(ներ)ի պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում:

Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով :>>,

- 4) 3-րդ և 13-րդ կետերում <<հունվարին>> բառը փոխարինել <<դեկտեմբերին>> բառով,
- 5) 8-րդ կետի 7-րդ ենթակետում <<ուսուցիչները>> բառը փոխարինել <<ուսուցիչը>> բառով,

6) 11-րդ կետում՝


ա.<<9-րդ և 12-րդ դասարաններում ավարտական և պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից:>> նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. <<9-րդ դասարանում ավարտական և 12-րդ դասարանում պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից>>,

բ. 1-ին ենթակետում <<պահանջների,>> բառից հետո լրացնել <<քննության>> բառը,

7) 12-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<5><<Բնագիտություն>> /<<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>,

<<Աշխարհագրություն>> / առարկայից՝ գրավոր՝ սովորողի ընտրությամբ, քննությանը տրվում է 120 րոպե>>:



Ս. ԱՄՐՅԱՆ